ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐՆ ԻԲՐԵՎ ՆԱԽԱՀԻՄՔ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀՏԴ 398
DOI: 10.56246/18294480-2023.15-29

ՂՌԵՋՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԳՊՀ դասախոս
էլփոստ՝ lgrejyan@yandex.ru
ԲԱՏԻԿՅԱՆ ԹԵՀՄԻՆԵ
ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի հայոց լեզու և գրականության բաժնի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողուհի
էլփոստ՝ tem. batikyan@bk.ru

«Գրողը, որ չի տիրապետում բանահյուսական գիտելիքներին, վատ գրող է»:
Մաքսիմ Գորկի

Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի հարուստ ու բազմաժանր ստեղծագործությունը սերտորեն կապված է ժողովրդական բանարվեստի հետ: Ժողովրդական բառուբանի խորը իմացությունը գրողին բանահյուսության լեզվագանձերն ու արտահայտչամիջոցները գրականության մեջ առատորեն կիրառելու և գեղարվեստական գրականությունը բանահյուսության վրա խարսխելու հնարավորություն է ընձեռել:

Դժվար է գտնել մեկ ուրիշ գրող, որ այդքան կարևորություն է տվել ժողովրդական բանարվեստին՝ իր գրական ստեղծագործությունների համար նյութ դարձնելով հասարակ հայ մարդու կյանքը, ազգային ցավն ու ճակատագիրը, ազգային իդեալները՝ համեմելով դրանք ժողովրդական բանահյուսության բանաստեղծական հյութեղ լեզվով ու արտահայտչամիջոցներով:

Ըստ Հովհաննես Թումանյանի՝ գրողի հիմնական խնդիրը պետք է լինի ժողովրդական նյութերի ներքին իմաստի հայտնագործումն ու ընդգծումը, և գրողը պետք է ձգտի ըստ ամենայնի գեղարվեստորեն և գաղափարապես կատարելագործելու ժողովրդի ստեղծածը՝ առանց դրա ոգին ու արմատները խաթարելու:

Հոդվածում քննության են առնվում բանաստեղծի գրական մշակումների մեջ ծանրակշիռ տեղ գրավող քնարական բանահյուսության այնպիսի տեսակ-

ներ, ինչպիսիք են ժողովրդական երգերը, և փորձ է արվում բացահայտելու դրանց դերն ու կիրառման դրդապատճառները գրողի չափածո ստեղծագործություններում: Քննության են առնվում նաև բանահյուսական նյութերի՝ Թումանյանի գրական մշակման մեթոդները:

Բանալի բառեր՝ *բանարվեստ, քնարական բանահյուսություն, ժողովրդական երգ, աշխատանքային երգատեսակ, ողբերգ, մանկական խաղաշխարհի երգեր, գրական մշակում:*

Թումանյանի «գեղարվեստական դաստիարակը» եղել է ժողովուրդը և նրա բանավոր գրականությունը: Հարազատ ժողովրդի կենդանի խոսքի «ուշադիր դիտումով», բանահյուսական տարրերի ու տարբեր ժանրերի օգտագործումով մեծ գրողը գեղարվեստական գրականության մեջ արտացոլել է ժողովրդական կենդանի խոսքի հարստությունը, ժողովրդական ոգին: Նա կարևոր դեր է հատկացրել գրականության մեջ ժողովրդական բանահյուսության նյութերի օգտագործմանը, քանի որ «...սա է էն ուղիղ ճանապարհը, որով հոսանք պետք է տալ, ներս բերել առողջ ժողովրդական ստեղծագործությունները և ուժեղ, հարուստ, կենդանի լեզուն»[1]: Խոսելով բանահյուսության և գրականության օրգանական կապի մասին՝ Թումանյանը գրում է. «...Այս պատմություններից, զրույցներից, սովորություններից շատերն յեկած են հին դարերից, մեր հին նախնիքների կյանքն ու սովորություններն են, նրանց մտքի ու հոգու ծնունդներն են: Ահա թե վորտեղ է հայոց գրականության աղբյուրը. ահա թե վորտողից պետք է խմի հայոց բանաստեղծը, հայոց վիպասանը, հայոց գրողը, վոր զորանա»[2]:

Մեծ բանաստեղծը ժողովրդական ստեղծագործություններից օգտվել է ազատորեն, անկաշկանդ, երբեմն բառացի, երբեմն էլ որոշակի ձևափոխությունների ենթարկելով, ինչպես ինքն է ասում, «որտեղ քեֆս տվել է»:

Ժողովրդական բանարվեստի նկատմամբ Թումանյանի հետաքրքրությունը երևում է դեռևս պատանեկության տարիներին. «10-11 տարեկան ժամանակս,- գրում է նա,- ժողովրդի մեջ երգվող երգերին տներ էի ավելացնում և գրում էի զանազան ոտանավորներ...»[3]: Արդեն 1889թ. նա գրել է «Կալի երգը», իսկ ժողովրդական մոտիվներով գրված բանաստեղծությունները մեծ մասամբ երևան են եկել 1907-1911թթ. և իբրև մանկական բանաստեղծություններ՝ ներառվել են «Հասկեր» և «Լուսաբեր» մանկական ամսա-

---

[1] Թումանյան Հովհ.,Երկերի լիակատար ժողովածու, հ. 6, Երևան, 1994, էջ161:
[2] Թումանյանը քննադատ, կազմեց և խմբագրեց՝ Նվ. Թումանյան, Երևան, 1939, էջ 32 :
[3] Թումանյան Հովհ., Երկեր, հատ. 4, Երևան, 1971, էջ 87:

գրում՝ երեխաներին կապելով հայրենի բնաշխարհի, բուսական և կենդանական աշխարհի հետ: Այս տարիներին է նա գրել «Արագիլ», «Ծիտը», «Խնոցի», «Կռունկներ», «Արտուտիկ», «Փիսոն», «Ճախարակ», «Գութան», «Կաքավի ողբը», «Սոխակի վիշտը», «Գարնան առավոտ», «Դժար տարի», «Ճնճղուկներ», «Մանուկն ու ջուրը» և այլն: Հիշյալ բանաստեղծությունների զգալի մասը՝ իբրև անանուն տաղեր, առկա են միջնադարյան ձեռագրերում: Դրանք Թումանյանի կողմից դիտվել են իբրև ժողովրդական երգեր, հետևաբար և ենթարկվել են գրական մշակման:

Վերամշակելով միջնադարյան տաղարաններից ու տպագիր զանազան հավաքածուներից քաղված բանահյուսական բազմաժանր նյութերը՝ մեծ գրողը դրանք մոտեցրել և հասանելի է դարձրել հայ ընթերցողին: «Ստեղծագործական նուրբ ու մանրախույզ կշռույթով վերակերտելով միջնադարյան ժողովրդական երգերը,- գրում է Մ. Ավդալբեգյանը, նա լեզվաոճական ժամանակակից հղկումով ու հնչումով դրանք մատչելի է դարձնում հայ մանուկներին.... Անհայտ ու անմշակ նյութը դարձնում է երեխաների բարոյակրթման միջոց ու նորից ժողովրդի սեփականություն, դրա դիմաց դրվատանքի փոխարեն ենթարկվելով տգետ ու չարամիտ բանսարկության»[4]:

Ժողովրդական բանահյուսությունը Թումանյանն օգտագործել է մեկ սկզբունքով՝ այնպես մշակել ժողովրդական նյութերը, որպեսզի դրանք չկորցնեն սկզբնաղբյուրի համն ու հոտը, այլ ավելի ազնվանան ու կատարելագործվեն[5]: Բանաստեղծն իր գեղարվեստական հմտություններով, ստեղծագործական յուրօրինակ միջամտությամբ հղկել է տարբեր ժանրերի երկեր, դրանք որոշ չափով համառոտել, ավելացրել ու փոփոխել առանձին բառեր ու տողեր, երբեմն էլ ամբողջական մասեր, տներ, կատարել լեզվական ու ոճական շտկումներ՝ չխախտելով տվյալ երկի կամ նրա տարբերակների սյուժեի ու բովանդակության սահմանները:

Բանաստեղծի բանահյուսական մշակումների մեջ մեծ տեղ են գրավում քնարական բանահյուսության ստեղծագործությունները:

Թումանյանի՝ ժողովրդական երգերից վերցրած հիմնական թեմաներն ու մոտիվները սոցիալական, աշխատանքային, բնության, սիրո, միջնադարյան երգերն ու մանկական խաղերգերն են, որոնք արտահայտում են միջավայրի բարքերն ու տրամադրությունները:

---

[4] Թումանյան Հովհ., Ուսումնասիրություններ և հրապարակումներ, հատ. 2, Երևան, 1969, էջ 33:
[5] Տե՛ս Թումանյան Հովհ., Ոչ գրական ոչնչությունները քննադատ, «Մշակ», 1909., N 162:

Աշխատանքային երգերի մշակումներ

Հավատարիմ մնալով աշխատանքային երգերի բնագրային բովանդակությանն ու կերտման արվեստին՝ Թումանյանն իր «Գութան», «Գութանի երգը», «Կալի երգը», «Կալի երգ» (Լոռեցոնց), «Դժար տարի» բանաստեղծություններում պատկերել է հայ աշխատավոր գյուղացիության ծանր կյանքը, հույզերն ու մտորումները՝ վերարտադրելով աշխատավոր մարդու իրավազուրկ և տնտեսապես անմխիթար գոյավիճակը, սոցիալական դառը խոհերն ու ապրումները: Վերոնշյալ բանաստեղծությունները հայ գյուղացու՝ հողագործական աշխատանքների ընթացքում հորինած և երգած ավանդական երգերի՝ հորովելների խտացումներն են: Իբրև Թումանյանի բանաստեղծական խոսքի մշակումներ՝ ժողովրդական այս երգատեսակները ընդլայնում են անցյալ դարերում հորովելների մասին ունեցած պատկերացումները:

Գրականագետ Արամ Ինճիկյանը, խոսելով վերոնշյալ ոտանավորների սկզբնաղբյուրների մասին, գրում է «...Իսկ հորեղբայր Մամից լսել է Լոռու հորովելները, սայլերգերն ու կալերգերը: Եվ, անշուշտ, «Գութանի երգը», «Կալի երգ» (Լոռեցոնց)», «Կալի երգ» (ժողովրդական), «Գութան» բանաստեղծությունները գրված են իր նշանավոր մաճկալ հորեղբոր երգերի ներշնչմամբ»[6]:

Վեց քառատողից բաղկացած «Գութանի երգը» աշխատավոր գյուղացու չարքաշ ու անապահով կյանքի լավագույն վկայությունն է: «Ձեռը պակաս, ուժը հատած, հազար ու մի ցավի տեր» գյուղացին պատմում է իր ծանր կյանքի ու առօրյայի մասին՝ վիշտը կիսելով գութանի ու եզան հետ: Գյուղացու՝ աշխատանքի միջոցով ծանր կյանքը հաղթահարելու հավատը արտահայտված է ժողովրդական արտահայտչամիջոցներով ու ոճական երանգավորումներով.

Արի՛, գութան, վարի՛ գութան,
Օրն եկել է, *ճաշ դառել,*
Առը շո՛ւռ տուր, *խոփիդ ղուրբան,*
Օրինյա՛լ է աստված, հորովե՛լ:

Հայ գյուղացին իր երգերում աշխատանքային գործիքներից առաջին տեղը հատկացնում է գութանին, որից էլ կախված է աշխարհի «շենությու-

---

[6] Ինճիկյան Ա., Հովհաննես Թումանյան (կյանքի և ստեղծագործության պատմությունը 1896-1899), Երևան, 1969, էջ 64-65:

նը», և որի վաստակով կերակրվում են բոլորը[7]: Ուստի լույսը բացվելուն պես լծում են գութանը, և սկսվում է վարը. «Լուսը լուսացավ,// Բարին շատացավ.//Վաղ լուսաբացին// Գութան լըծեցին.// Հորովել հո՜...» («Գութան»): Գրողը ընդհանուր երգից նույնությամբ թողել է ընդամենը չորս տող և դրանց հիման վրա ավելացրել է բազմաթիվ նոր տողեր, արտահայտություններ և ամբողջական տներ:

Բանաստեղծության «Լուսը լուսացավ, // Բարին շատացավ» երկտողը նույնությամբ առկա է Ե. Լալայանի «Ջավախքի բուրմունք»[8] և Աղեք. Մխիթարյանցի «Տաղեր ու խաղեր»[9] ժողովածուների մեջ զետեղված հորովելներում, որոնցից էլ՝ իբրև սկզբնաղբյուրներից, օգտվել է Թումանյանը: Ի դեպ, հիշյալ երկտողը և նմանատիպ «Լուսացավ, լուսն ի բարի», «Լուսը լուսացավ, բարին բացվեցավ» սկսվածքային բանաձևերը հիմնականում լայն տարածում ունեն ժողովրդական այսպես կոչված «Առավոտյան կամ լուսաբացի աղոթքներում», որոնք, կապված լինելով լույսի, նոր սկսվող օրվա, կյանքի վերածնության հետ, հիմնականում ուղղված են իրական կյանքի սոցիալական, բարոյական, ինչպես նաև անձնական ցանկությունների կատարման նպատակին[10]: Գութանավարը, ժողովրդական մտածողությանը բնորոշ հմայական բանաձևերով սկսելով իր օրը, խանդաղատանքի ջերմ խոսքերով (գութա՛ն ջան) դիմում է գութանին, որպեսզի վերջինս վարի, որ արտը ցանեն, հետո հնձեն, տուն տանեն և շատ հաց ունենան: Վերջում, բնականաբար, գութանավարը չի մոռանում փառաբանել աստծուն. «Օրհնյա՜լ է աստված»: Բանաստեղծության յուրաքանչյուր տուն ավարտվում է «Հորովել հո՜...» կանչ-ձայնարկությամբ, որը աշխատանքային երգերի բաղկացուցիչ մասն է:

Բանահյուսության մշակման ու օգտագործման իրեն հատուկ վարպետությամբ է գրողը ստեղծել նաև «Կալի երգերը»: Գիտակցելով դաշտային աշխատանքների ժամանակ բանող անասունների անմիջական օժանդակությունը՝ շինականը բնականաբար ջերմ, սրտացավ վերաբերմունք է ցուցաբերում նրա հանդեպ: Ժողովրդական մտածողությանը բնորոշ կամ ժողովրդի բանավոր խոսքում կիրառվող ցանկության պատկերավոր բանաձևերով,

---

[7] Ղանալանյան Ա., Հայ շինականի աշխատանքային երգերը, Երևան, 1937, էջ 24:
[8] Լալայան Ե., Ջավախքի բուրմունք, Թիֆլիս, 1892, էջ 64:
[9] Մխիթարյանց Աղեք., Տաղեր ու խաղեր, Ալեքսանդրապոլ, 1900, էջ 133:
[10] Հարությունյան Ս., Հայ հմայական և ժողովրդական աղոթքներ, Երևան, 2006, էջ 187-198, 384:

ինչպիսիք են փաղաքշանքի խոսքերը՝ «Ծիրան ջան, քեզ մեռնեմ, ղադեդ առնեմ, ոտիդ ղուրբան» և այլն, աշխատավորը դիմում է իր եզանը՝ իրեն օգնելու, գյուղատնտեսական աշխատանքները շուտ ավարտելու ակնկալիքով:

Ժողովրդական սկզբնաղբյուրի ոգուն հարազատ է նաև «Դժար տարի» ոտանավորը, որտեղ գրողը վեր է հանում սոցիալական անհավասարության թեման: Մանազկերտից գրառված ժողովրդական երգի՝[11] 75 տողից բաղկացած հորովելի մի մասի ընտրությամբ, ինչպես նաև բարբառային լեզվի փոփոխությամբ ու նոր տողերի ավելացմամբ Թումանյանը ստեղծել է բոլորովին նոր ոտանավոր, որտեղ հայ գյուղացին բողոքում է իր տնտեսական անհույս վիճակից, «դըժար տարվանից» և պահանջվող հարկից. *Շատ է դըժար էս տարի. // Պապին տարան քյոխվի դուռ, // Հարկ են ուզում.-տո՛ւր հա, տո՛ւր:* Գանգատվում է նաև ժողովրդական գութաներգի հեղինակը՝ իր «ծուռ ու մուռ» գութանին պատմելով «մըռմուռ տարվա» և պահանջվող «խարաճի» մասին. *Մեր գութանն ա ծուռ ու մուռ, // Հըս տարվա տարին շատ մռմուռ, // Ըռնճպար տարին խազու դուռ, // Խարաճ կուզին, տուր, հա տուր...//*: Ուստի հողագործ գյուղացին դիմում է իր գութանին խնդրանքով, որ օգնի իրեն՝ «ցորենով ու գարով» լցնելու անհագ քյոխվի փեշը, որպեսզի չզրկվի իր գոմեշից.

Վարի՛, գութան ջան, վարի՛,
Դատենք ցորեն ու գարի,
Տանենք ածենք քյոխվի փեշ,
Որ չըտանի մեր գոմեշ[12]:

Նույն պատկերն ենք տեսնում նաև Մանազկերտի գութաներգում.

Հառավել-հառավել, հեշ
Հառավել Մուսլո գոմեշ,
Ձեռս ի թալեմ աստծու փեշ,
Մզի ցորեն տա փեշքեշ,
Ծախենք տանք մեր ռեսի բեշ,
Չեղնի ծախին բոզ գոմեշ[13]:

Աշխատավոր շինականի համար ավելի հեշտ է եղել բաժանվել իր ընտանիքի անդամներից որևէ մեկից, քան զրկվել իր բանող անասունից՝

[11] Էմինեան ազգագրական ժողովածու, հատ. Զ, Մոսկուա-Վաղարշապատ, 1906, էջ 139:
[12] Թումանյան Հովհ., Երկեր, հատ. 1, Երևան, 1988, էջ 239:
[13] Էմինեան ազգագրական ժողովածու, հատ. Զ, Մոսկուա-Վաղարշապատ, 1906, էջ 139:

Մուսլի գոմեշից, Ծիրան եզից: «Կինս կուտամ, յեզս չեմ տա», կամ «Կինս կուտամ, ջորիս չեմ տա»,-ասում է նա առանց տատանվելու, երբ խոսք է լինում իր կենդանուց բաժանվելու մասին[14]: Երդվել է գյուղացին իր լծկաններով՝ «Իդա լծքի խէր», «Իդա գոմշու հալալ աշխատանք»[15] :

Տնտեսական անապահով դրությունը և ընդհանրապես ընտանիքի կարիքները ստիպել են հայ գեղջկուհուն անգամ հանգիստն անցկացնել աշխատանքի մեջ՝ գործելով, ճախարակի առաջ նստելով և այլն: Եվ այս ընթացքում գեղջկուհին հորինել է բազմաթիվ երգեր՝ «արտահայտելով դրանց մեջ իր կյանքն ու աշխատանքը, ապրումներն ու խոհերը: Չունենալով այլ սրտակից բարեկամ և ունկնդիր՝ նա երգելով դիմել է իր աշխատանքի ընկեր, փայփայանքի առարկա գործիքներին, պատմել նրանց սեփական ապրումների ու խոհերի մասին»[16]: Այս առումով նշանակալից է «Ճախարակ» բանաստեղծությունը, որի սկզբնաղբյուրը գտնում ենք «Ազգագրական հանդեսի» էջերում[17]: Ժողովրդական երգի գեղջկուհու նման Թումանյանի հերոսուհին ևս իրեն հավատարիմ ու ցավակից ընկեր է համարում ճախարակին՝ պատմելով իր անթիվ հոգսերի մասին և իր սիրելի ճախարակից, որն իր վերջին հույսն է, օգնություն է հայցում:

Երգի՝ քառասուն տողից կազմված բնագրից գրողն ընտրել է միայն 14-ը, հյուսել միմյանց և փոխել է բարբառային լեզուն՝ պահպանելով երգի ճանաչողական բովանդակությունը և տաղաչափական ռիթմը: Զուգադրենք Թումանյանի «Ճախարակ» բանաստեղծությունը և ժողովրդական «Ճախարակի երգ»-ի բնագրի համապատասխան հատվածները.

Մանի՛, մանի՛, ճախարակ,
Նըստենք բանի, ճախարակ,
Անտերին տեր, ճախարակ,
Որբերին հեր, ճախարակ:

Լուսնյակը դուրս է եկել,
Աչքերիս լուս է եկել:
Լուսնի լուսով մանեմ ես,

---

[14] Տե՛ս, Ղանալանյան Ա., Հայ շինականի աշխատանքային երգերը, Երևան, 1937, էջ 26:
[15] Էմինեան ազգագրական ժողովածու, հատ. Զ, Մոսկուա-Վաղարշապատ, 1906, էջ 65:
[16] Նշվ. աշխ., էջ 23:
[17] Ազգագրական հանդես, գիրք XI, Թիֆլիս, 1904, էջ 68:

Սպիտակ ոստեր անեմ ես….[18]

Մանի, մանի, իմ ջահրայ,
Իմ ջահրէն բան ա նստել,
Անտէրին տէր, իմ ջահրայ,
Անհէրին հէր, իմ ջահրայ,
Սստղերը դուս ա եկել,
Աչքերիս լուս ա եկել,
Մանեմ, մանեմ, մտիկ կանեմ.
Մեծ մեծ ոստեր կշիկ կանեմ[19]:

Աշխատանքային գործիքների մեջ պատվավոր տեղ ունի նաև խնոցին: Եվ գեղջկուհու՝ դեպի իր աշխատանքային գործիքներն ունեցած սերն ու երախտագիտությունը ցայտուն կերպով արտահայտված ենք տեսնում Ե. Լալայանի «Ազգագրական հանդեսում» տպագրված ժողովրդական «Խնոցու երգի» մեջ: Ժողովրդական երգի 10 տողերից Թումանյանը նույնությամբ ընտրել է չորսը (5-8 տողերը), որտեղ սեղմ ձևով բնութագրվում է խնոցին.

Հարի՛, հարի՛, խնոցի՛,
Մեջդ բարի, խնոցի՛,
Ունկըդ բարակ, խնոցի՛,
Մեջըդ կարագ, խնոցի՛[20]:

Ժողովրդական ողբերգի մշակումներ

Հայկական ողբերգն ունի հազարամյակներից եկող ազգային խոր ակունքներ և արմատներ: «Հայկական դարավոր սգերգությունը ունի երկու թև. մարդու մահը սգացող երգեր և հայրենի բնակավայրի կորուստը սգացող երգեր»[21]:

Միջնադարում, որը հայերի համար լի էր ավերով ու կոտորածներով, ծնունդ են առել նաև ժողովրդական բարձրարվեստ երգեր, որոնցում նկատելի է հայ ժողովրդին բաժին ընկած արհավիրքների ու արյունահեղությունների արտացոլումը: Այս թեմայով երգատեսակներն «ավելի շատ են, քան

[18] Թումանյան Հովհ., Երկեր, հատ. 1, Երևան, 1988, էջ 234:
[19] Ազգագրական հանդես, գիրք XI, Թիֆլիս, 1904, էջ 68:
[20] Թումանյան Հովհ., Երկեր, հատ. 1, Երևան, 1988, էջ 232:
[21] Հարությունյան Ե., Հայ ժողովրդական սգո երգեր, «Հայ ազգագրություն և բանահյուսություն» մատենաշար, թ.24, Երևան, 2007, էջ 1923:

մեկ մարդու մահը սգացող վշտերգերը, և ունեն ավելի անձնական, ընդհանրացնող բնույթ»[22]: Վերոնշյալ երգատեսակի առատությունը պայմանավորված է նաև պատմաշրջանի հասարակական կյանքի փոթորկահույզ անցուդարձերով[23]:

Ժողովուրդն իր վիշտն ու դժբախտությունը սգում էր այլաբանորեն՝ հաճախ կիրառելով տարբեր թռչունների, մասնավորապես սոխակի ու կաքավի անունից հանդես գալու հնարքներ: Գեղեցիկ ու անպաշտպան այս թռչուններին մեր ժողովուրդը նմանեցնում էր իրեն: Ողբերի մի մասը մայրական սգերգեր են:

«Ողբ» բառը ենթադրում է առավելապես քնարական ստեղծագործություն, որտեղ իրադարձությանը այնքան տեղ չէր տրվում, որքան դրա հարուցած զգացմանը, մտածումներին, որոնք անպայման ավարտվում էին լավատեսությամբ,- նշում է Ա. Մադոյանը Պողոս Խաչատրյանի «Հայ միջնադարյան պատմական ողբեր ԺԴ-ԺԷ դդ.» գրքի առթիվ գրված գրախոսության մեջ[24]:

Ժողովրդական մտածողությանը հարազատ և ողբերգերին բնորոշ պատկերների առկայությամբ է ստեղծված Թումանյանի «Սոխակի վիշտը» բանաստեղծությունը, որի սկզբնաղբյուրը գտնում ենք Կոմիտասի և Մ. Աբեղյանի «Հազար ու մի խաղ» ժողովածուում (Բ հիսնյակ): Ինչպես երևում է բնագրային քննությունից, ժողովրդական երգի մեջ Թումանյանի մտցրած փոփոխություններն ու լրացումները թեև զգալի են (որոշ տողերի կրճատումներ, նորերի ավելացումներ, տողերի դասավորության փոփոխություններ, «Արորն ասաց տատրակ հավքուն» վերնագրի փոփոխություն), բայց պահպանված են ժողովրդական երգի լեզվաոճական տարրերը:

Սրտակեղեք, ներքին տվայտանքներով լի ողբ է բանաստեղծությունը, որտեղ դիմառնաբար հանդես եկող հերոսները գեղարվեստական ընդհանրացումներ են և ներկայացնում են մի ողջ երկրի, ժողովրդի հավաքական կերպարը:Ժողովրդի ցավն անձնապես զգացող ու ապրող թռչունը՝ սոխակը,

---

[22] Տե՛ս, Հարությունյան Ե., Հայ ժողովրդական սգո երգեր, «Հայ ազգագրություն և բանահյուսություն» մատենաշար, թ.24, Երևան, 2007, էջ 192:

[23] Տե՛ս, Խաչատրյան Պ., Հայ միջնադարյան պատմական ողբեր (ԺԴ-ԺԷ դդ.), Երևան, 1969, էջ 29-49:

[24] Մադոյան Ա., Հայ միջնադարյան պատմական ողբեր (ԺԴ-ԺԷ դդ.), «Պատմաբանասիրական հանդես», թ.3,1970, էջ 270:

պատմում է իր հայրենիքին հասած աղետների ու դժբախտությունների մասին.

Ձմե՛ռ նստեց մեր սարերուն,
Կըտրեց ջըրիկ աղբյուրներուն,
Կըտրեց հոտիկ ծաղիկներուն,
Կըտրեց ձենիկ իմ ձագերուն...[25]

Օտար թռչունը հուսադրում է նրան ապագայի լավատեսական հեռանկարով՝ մռայլ ողբերգությունից գնալ դեպի լույս, որը միանգամայն համահունչ է ժողովրդական ողբերգերի ոգուն.

Էլի կուգա քեզ նոր գարուն,
Արև ծագե էս վայրերուն,
Հալին ձյուներ մեր սարերուն,
Բացվին ջըրեր աղբյուրներուն,
Ու շուրջ առած քո ձագերուն,
Բարև կուտաս ծաղիկներուն[26]:

Ողբերգի ժանրային գրեթե բոլոր առանձնահատուկ գծերը, միահյուսված Թումանյանի բանաստեղծական մտածողության փայլատակումներին, դրսևորված ենք տեսնում «Կաքավի ողբը» բանաստեղծության մեջ, որտեղ ժողովրդական երկու տարբեր երգերի միահյուսմամբ, մի շարք տողերի ու բառերի փոփոխմամբ, միջնադարյան հայերենն ու բարբառը գրական-ժողովրդականի վերածելով, տարբեր հատվածների (Բ,Դ) ավելացումով, գրողը ստեղծել է բոլորովին նոր բանաստեղծություն: Ժողովրդական այս երգն առաջինը տպագրվել է Ղևոնդ Ալիշանի «Հայ երգք ռամկականք» (1852) ժողովածուում, երկրորդը՝ «Մասիս» շաբաթաթերթի 1884 թվականի 3730 համարում:

Ժողովրդական ողբերգերում առանցքային է ողբացող մոր կերպարը: Զավակի կորուստը տակնուվրա է անում մոր ներաշխարհը, անտանելի է դառնում կյանքը, գիշերը կարծես չի լուսանում, ծածկվում է աչքերի լույսը, ի չիք են դառնում զավակի հետ կապված երազանքներն ու հույսերը:

Ժողովրդական սգերգերին բնորոշ այս պատկերները Թումանյանը հարազատորեն պատկերել է «Կաքավի ողբում»: Բանաստեղծության քնարական հերոսը՝ կաքավը, որն անձնավորված է որդեկորույս մոր կերպարում,

---

[25] Թումանյան Հովհ., Երկեր, հատ. 1, Երևան, 1988, էջ 253:
[26] Նույն տեղում:

իր սրտակեղեք վշտերը պատմում է հավքերին՝ արտահայտելով իր կորստի ցավը: Նա բույն է շինել, ձագ հանել, սակայն նրան տարել են, կարկաչուն վզիկը սուր դանակով կտրել, և անհայտ է նրա տեղը:

Դառն է որդեկորույս մոր ճակատագիրը, ամոքվելու միջոց չունի նա: Եվ ինչպես ժողովրդական երգի սգվորը, այնպես էլ Թումանյանի կաքավը, բազում ձևերով ու միջոցներով աշխատում է բոլորին հասկանալի դարձնել իր հոգեվիճակը.

...Զօրը մենակ՝ չեմ դիմանում էն բընում,
Գիշերն անտակ՝ չի լուսանում էն բընում.
Անցած օրերն եկել նորից էն բընում,
Գել են դառել, ուտում են ինձ էն բընում...[27]

Այս երգատեսակներն առատ են, երկխոսություններով, հարց ու պատասխաններով ինչպես օրինակ ՝

-Ինչ կու լաս, իմ հաւ թևաւոր:
-Կու լամ, ողորմուկ, կու լամ,
Աչերուս արուն կու gօղայ...[28]

Թումանյանը օգտագործել է ժողովրդական սգերգերին բնորոշ այս պատկերները ևս՝ շեշտելով հայի անհույս ու անսփոփ վիճակը:

-Սև կաքավիկ, ու՞ր պիտի դու նըստես հիմա:
-Չորուկ բարդի ծառի վրա:
-Սև կաքավիկ, թե որ նըրա տերը գա՝ ու՞ր:
-Լացող ուռու ճյուղքին տըխուր:
-Սև կաքավիկ, էն տեղից էլ քշեն որ քե՞զ:
-Կըրակ կըլնեմ, կէրեմ ինձ ես...[29]

Մեծ գրողի տեսադաշտից չեն վրիպել նաև ժողովրդական սգերգերի գեղարվեստական համակարգում մեծ դեր խաղացող կրկնակները, ափսոսանք և ցավ արտահայտող ձայնարկությունները, ինչպիսիք են ա՜յ, վա՜յ,-վու՜յ և այլն.

Վա՜յ կաքավիկ,
Սև կաքավիկ,

---

[27] Թումանյան Հովհ., Երկեր, հատ. 1, Երևան, 1988, էջ 255:
[28] Հայրեններ, քննական բնագիրը, ներածությունը և ծանոթագրությունները՝ Ա.Շ. Մնացականյանի, Երևան, 1995, էջ 757:
[29] Թումանյան Հովհ., Երկեր, հատ. 1, Երևան, 1988, էջ 255:

Վա՜յ քո ճուտին,
Էն խորոտին,
Վա՜յ սըգավոր
Իր մոր սըրտին:

Վա՜յ կաքավիկ,
Սև կաքավիկ,
Վա՜յ իմ կորած
Սիրուն հավիկ[30]:

Բնության, կենդանական և մանկական խաղաշխարհի երգեր

Հավատարիմ մնալով ժողովրդական մտածողությանը՝ մեծ գրողը ուղի է հարթել նաև դեպի մանկան մտավոր աշխարհ: Նրա ավելի քան երեք տասնյակի հասնող մանկական բանաստեղծությունների ատաղձը, ինչպես նշվել է բազմիցս, հայրենի եզերքի բանահյուսական թեմաներն են, իսկ շատերն էլ արդյունք են իր ծննդավայրում ապրած մանկական տարիների:

Այս առումով հատկապես աչքի են ընկնում մանկական բանահյուսական նմուշների՝ բնօրինակայից չշեղվող մշակումները, որոնք մեծ բանաստեղծի գրչի տակ նոր երանգավորում են ստացել: Այդպիսիք են «Աղվեսը», «Ուլունք», «Փիսո», «Արտուտիկ», «Կռունկներ», «Մանուկն ու ջուրը » և այլն:

Միջնադարյան «Ի վերայ աղուէսին» մանկական երգը, որի բնագիրը առկա է Կ.Կոստանյանցի «Նոր ժողովածուի» առաջին պրակում[31], Թումանյանը միջին հայերենից փոխադրել է գրականի՝ պահպանելով ժողովրդականի համն ու հոտը, փոփոխել է առանձին բառեր և տողեր: Բնագրի «Տաղ ուրախութեան ի վերայ աղուէսին»[32] վերնագրի փոխարեն դրել է «Աղվեսը»: Բնագրի և Թումանյանի կողմից նրա մշակված տարբերակի ընդհանրությունն այն է, որ պահպանված է ինչպես երգի ավանդական կառուցվածքը՝ 7 քառյակ 28 տողով, այնպես էլ սյուժեի ներքին զարգացումը: Կատարվել են միայն լեզվական բնույթի որոշ փոփոխություններ, այսինքն՝ երգի լեզուն ավելի է մոտեցել գրականին: Ընդհանուր է նաև միջնադարյան այս երգի ավարտի քառյակը /քառատողը/՝.

---

[30] Նույն տեղում:
[31] Կոստանեանց Կ., Նոր ժողովածու, պրակ Ա, Թիֆլիս, 1892, էջ 114:
[32] Տե՛ս Մնացականյան Աս., Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Երևան, 1956, էջ 379:

Ով աղվեսուկ, փոքրիկ գազան,
Ոտերն կարճ ու խիստ վազան,
Շներն ամէն քեզ չի հասան,
Սիրուն աղուէս, ագին ծաղիկ[33]:

Աղվես, աղվես փոքրիկ գազան,
Ոտներըդ կարճ ու խիստ վազան,
Շներն ամեն քեզ չըհասան,
Ճարպիկ աղվես, ագին ծաղիկ[34]:

Երգի մեկ այլ տարբերակ տպագրված է Ա. Տեր-Սարգսենցի «Պանդուխտ վանեցին» գրքում՝ «Աղվսու խորտիկ» վերնագրով[35], որտեղ բնագրի և նրա մշակման նմանությունը միայն սյուժեի ներքին զարգացման մեջ է:

Նույն մոտեցումն ենք նկատում նաև «Երգ արագիլի» բանաստեղծության մշակման մեջ: 7 քառատողից կազմված ժողովրդական այդ երգի սկզբնաղբյուրը առաջին անգամ տպագրվել է Ղևոնդ Ալիշանի «Հայ երգք ռամկականք» ժողովածուում (1852), ապա՝ Մ. Միանսարյանցի «Քնար հայկականում»: Գրողը մշակման է ենթարկել միայն առաջին և չորրորդ քառատողերը՝ ավելացնելով լավատեսական տրամադրություն ու ավարտելով կենսաբեր գարունը խորհրդանշող արագիլի վերադարձով.

Արագի՛լ, բարով եկար,
Հա՜յ արագի՛լ, բարով եկար,
Դու մեզ գարնան նշան բերիր,
Մեր սրտերը ուրախ արիր...[36]

Թումանյանի աչքից չեն վրիպել նաև մանկական շարաբարդված երգատեսակները: Այսպես՝ «Ծիտը», «Ուլունք» ժողովրդական ստեղծագործությունների երկարաշունչ և շեղջակուտակ կառուցվածքը երեխայի համար դյուրընկալելի դարձնելու նպատակով հիղինակը համառոտել է՝ բնավ չխաթարելով երգի իմաստն ու ընթացքը:

Տիգրան Նավասարդյանի ֆոնդում պահվող ժողովրդական տարբերակը կազմված է ավելի քան 16 տողից[37]: Բնագրային ընդարձակ շարաբար-

---

[33].Կոստանեանց Կ., Նոր ժողովածու, պրակ Ա, Թիֆլիս, 1892, էջ 114:
[34] Թումանյան Հովհ., Երկեր, հատ. 1, Երևան, 1988, էջ 213:
[35] Տեր-Սարգսենց Ա., «Պանդուխտ վանեցին», Նամակներ, երգեր, առածներ, առեղծուածներ, Կ. Պոլիս, 1875, էջ110:
[36] Թումանյան Հովհ., Երկեր, հատ. 1, Երևան, 1988, էջ 227:
[37] Տե՛ս հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության արխիվի Տ. Նավասարդյանի ֆոնդ:

դությունից գրողը վերցրել է ընդամենը վեց տող: Կառուցվածքային զգալի մշակումից և լեզվական փոփոխությունից հետո Թումանյանի երգը ստացել է հետևյալ տեսքը.

Հուռին գնաց բանջարի,
Բանջար չեղավ՝ խոտ եղավ,
Խոտի տակին ծիտ եղավ,
Ծըլվըլալեն դուրս թռավ,
Ծիտը թռավ գերանին,
Կանաչ խոտը բերանին:

Նույն մոտեցմամբ է մշակված նաև հայ մանկական երգարվեստում տարածված «Հեքիաթ, հեքիաթ պապս ա» շարաբարդությունը, որտեղ արտացոլում են գտել գյուղաշխարհի կյանքին առնչվող կենցաղային գծեր: Թումանյանը թեև չի գործածել ավանդական բանաձևային սկիզբը, սակայն երգի ընթացքը պահպանել է գրեթե անփոփոխ, իսկ լեզուն մոտ է գրականին.

...Գառը տանեմ Աստըծուն տամ,
Աստուած ինձ թօն տայ,
Թօնը տանիմ արտին տամ,
Արտը ինձի ցորեն տայ,
Ցորենը տանիմ ջաղջին տամ,
Ջաղացքն ինձի ալուր տայ,
Ալուրը տանեիմ տաշտին տամ,
Տաշտը ինձի խըմոր տայ,
Խըմորը տանիմ խոնչին տամ,
Խոնչան ինձի գունտ տայ...[38]

Ամպերը եկան անձրևով.
Անձրևը տանեմ արտին տամ,
Արտը ինձ ցորեն տա.
Ցորենը տանեմ ջաղացին տամ,
Ջաղացն ինձ ալյուր տա,
Ալյուրը տանեմ տաշտին տամ,
Տաշտը ինձ խմոր տա,

[38] Ժողովրդական անգիր բանաստեղծութիւններ, ժողովեց՝ Տիգրան Վարդանեանց, Թիֆլիս, 1900, էջ 32:

Խըմորը տանեմ թոնրին տամ,
Թոնիրն ինձ հաց տա...[39]

Երգի բազմաթիվ տարբերակներից միայն Ս. Քամալյանի և Տ. Վարդանյանցի տարբերակներն ունեն նույն ավարտը, ինչ Թումանյանի մոտ է.

Հացը տանեմ բոշին տամ,
Բոշեն ինձ ոլունք տա,
Ոլունքն տանեմ նանին տամ,
Նանս ինձ ծեծի՛, ծեծի՛,
Տանից քշի, դուրս անի[40]:

Մեծագույն վարպետությամբ և հիմնականում հարազատ մնալով ժողովրդական սկզբնաղբյուրներին՝ մեծ գրողը մշակել է բնության, կենդանական և մանկական խաղաշխարհի բազմաթիվ այլ երգեր ևս՝ «Արտուտիկ», «Ճնճղուկներ», «Կռունկներ», «Գարնան առավոտ», «Մանուկն ու ջուրը», «Քաջ Կիվիվը» և այլն:

Այսպիսով՝ Թումանյանի՝ ժողովրդական երգերի գեղարվեստական մշակումները, պահպանելով ժողովրդական ստեղծագործություններին բնորոշ պարզությունը, ոգին ու ոճը, պատկերացում են տալիս մեր գեղջկական, սգո երգերի հիմնական տեսակների մասին, բացահայտում են նրանց թեմաները, բնորոշ մոտիվները և լույս են սփռում բանաստեղծական պատկերների, տաղաչափական ձևերի և բերած նորությունների վրա՝ արդիականացնելով և բարձրացնելով նրանք մի նոր աստիճանի:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ազգագրական հանդես, գիրք XI, Թիֆլիս, 1904:
2. Ալիշան Ղևոնդ, Հայ երգք ռամկականք, Վենետիկ, 1852:
3. Էմինեան ազգագրական ժողովածու, հատ. Զ, Մոսկուա-Վաղարշապատ, 1906:
4. Թումանյան Հովհ., Երկերի լիակատար ժողովածու, հատ. 1, Երևան, 1988:
5. Թումանյան Հովհ., Երկերի լիակատար ժողովածու, հատ.6, Երևան, 1994:
6. Թումանյանը քննադատ, կազմեց և խմբագրեց՝ Նվ. Թումանյան, Երևան, 1939:
7. Թումանյան Հովհ., Ուսումնասիրություններ և հրապարակումներ, հատ. 2, Երևան, 1969:
8. Թումանյան Հովհ., Ոչ գրական ոչնչությունները քննադատ, «Մշակ», 1909:

[39] Թումանյան Հովհ., Երկեր, հատ. 1, Երևան, 1988, էջ 230:
[40] Նույն տեղում:

9. Ժողովրդական անգիր բանաստեղծութիւններ, ժողովեց Տիգրան Վարդանեանց, Թիֆլիս, 1900:
10. Ինճիկյան Ա., Հովհաննես Թումանյան (կյանքի և ստեղծագործության պատմությունը 1896-1899), Երևան, 1969:
11. Լալայան Ե., Ջավախքի բուրմունք, Թիֆլիս, 1892:
12. Խաչատրյան Պ., Հայ միջնադարյան պատմական ողբեր (ԺԴ-ԺԷ դդ.), Երևան, 1969:
13. Կոստանեանց Կ., Նոր ժողովածու, Միջնադարեան հայոց տաղեր և ոտանաւորներ, պրակ Ա, Թիֆլիս, 1892:
14. Կոստանեանց Կ., Նոր ժողովածու, Միջնադարեան հայոց տաղեր և ոտանաւորներ, պրակ Բ, Թիֆլիս, 1892:
15. Կոստանեանց Կ., Նոր ժողովածու, Միջնադարեան հայոց տաղեր և ոտանաւորներ, պրակ Գ, Թիֆլիս, 1896:
16. Հարությունյան Ս., Հայ հմայական և ժողովրդական աղոթքներ, Երևան, 2006:
17. Հարությունյան Ե., Հայ ժողովրդական սգո երգեր, «Հայ ազգագրություն և բանահյուսություն» մատենաշար, թ.24, Երևան 2007:
18. Հայրեններ, քննական բնագիրը, ներածությունը և ծանոթագրությունները Ա.Շ. Մնացականյանի, Երևան, 1995:
19. Ղանալանյան Ա., Հայ շինականի աշխատանքային երգերը, Երևան, 1937:
20. Մադոյան Ա. Հայ միջնադարյան պատմական ողբեր (ԺԴ-ԺԷ դդ.), «Պատմաբանասիրական հանդես», թ.3, 1970:
21. Միանսարեանց Մ., Քնար հայկական, Ս. Պետերբուրգ, 1868:
22. Մխիթարեանց Աղեք., Տաղեր ու խաղեր, Ալեքսանդրապոլ, 1900:
23. Տեր-Սարգսենց Ա., «Պանդուխտ վանեցին», Նամակներ, երգեր, առածներ, առեղծուածներ, Կ. Պոլիս, 1875:

FOLK SONGS AS A PREREQUISITE FOR TUMANYAN'S POETRY

GHREJYAN LUSINE
PhD in Philology,
Associate Professor,
GSU Lecturer, Researcher of the
Institute of Archaeology and Ethnography
NAS RA
e-mail: lgrejyan@yandex.ru
BATIKYAN TEHMINE
2nd year Master's degree student of the
Department of Armenian Language and Literature,
Faculty of Philolgy,GSU
e-mail: tem.batikyan@bk.ru

The article deals with various forms of lyrical folklore, such as folk songs, which occupy a significant place in the literary works of All-Armenian poet Hovhannes

Tumanyan, and reveals the role and motives for their use in the poet's poetic works. Methods of Tumanyan's literary processing of folklore materials are also examined.

Tumanyan's literary processing of folk songs have a good insight of the main types of our rural and mourning songs, reveal their themes, characteristic motifs and shed light on their poetic imagery, metrical forms and novelty.

According to Tumanyan, the main task of the writer should be the revelation and extraction of the internal folklore materials, and the writer should strive for artistic and ideological improvement of the creation of the people without destroying their spirit and roots.

With his literary works, Tumanyan not only gave children unique works, but also modernized them and raised them to a new level by preserving the simplicity and style inherent in folk works.

Keywords: *Folk art, lyrical folklore, folk song, songs about work, tragedy, children's game songs, literary processing.*

НАРОДНЫЕ ПЕСНИ КАК ПЕРВОСНОВА ПОЭМ ТУМАНЯНА

КРЕДЖЯН ЛУСИНЕ
Кандитат филологических наук, доцент
Преподаватель ГГУ
Научный сотрудник института археологии и этнографии НАН РА
электронная почта: lgrejyan@yandex.ru
БАТИКЯН ТЕЙМИНЕ
Студентка 2-ого курса магистратуры
отделения армянского языка и литературы
филологического факультета ГГУ
электронная почта: tem.batikyan@bk.ru

В статье рассматриваются такие виды лирического фольклора, как народные песни, занимающие значительное место в творчестве великого армянского поэта Ованеса Туманяна, и делается попытка выявить роль и мотивы их использования в поэтических произведениях писателя. **Рассматриваются также туманяновские методы литературной обработки фольклорного материала.** Литературные обработки Туманяном формируют наше представление об основных типах крестьянских и похоронных песен, раскрывают их темы, характерные мотивы и бросают свет на их поэтические образы, формы стихосложения и новости, которые они несут.

По мнению Туманяна, главной задачей писателя должно быть раскрытие и выделение внутреннего смысла фольклорных материалов, а писатель должен стремиться к художественно-идеологическому совершенствованию народного творения, не разрушая его духа и корней.

Своими литературными обработками Туманян подарил детям не только уникальные произведения, но и, сохранив присущие народным произведениям простоту и стиль, модернизировал их и поднял на новый уровень.

Ключевые слова: *народное творчество, лирический фольклор, народная песня, трудовые песни, трагедия, детские игровые песни, литературная обработка.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 15.06.2023թ.:
Հոդվածը գրախոսվել է 28.06.2023թ.:
Ընդունվել է տպագրության 17.11.2023թ.: